

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՍԱՐԳՍՅԱՆ ԳՈՀԱՐ ԳԱՎՐՈՒՇԻ

**ԻՐԱՑՎԵԼԻՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
(Արցախի Հանրապետության սննդի արտադրության կազմակերպությունների
նյութերով)**

Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ
տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար
ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Լիանա Հայկազի Գրիգորյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Արմեն Աշմատի Հակոբյան

տնտեսագիտության թեկնածու
Սողոմոն Ռաֆայելի Միրզոյան,

Առաջատար կազմակերպություն՝

**ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտ**

Ատենախոսության պաշտպանությունը կայանելու է 2022թ. ապրիլի 28-ին՝ ժամը 14⁰⁰-ին, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի տնտեսագիտության թիվ 014 մասնագիտական խորհրդում:

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Նալբանդյան 128:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2022թ. մարտի 17-ին:

014 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր՝

S. U. Մարտիրոսյան

ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Կազմակերպությունների իրացվելիության ֆինանսական կառավարման բարելավման հիմնախնդիրները մշտապես գտնվել են տեսաբանների և գործարարների ուշադրության կենտրոնում: Շուկայում նպաստավոր մրցակցային դիրքեր գրավելու նպատակադրումներով գործնականում կազմակերպությունները ձգտում են շահույթի ավելացման և շահութաբերության բարձրացման, որը չի կարող երկար ժամանակահատվածով ապահովվել, եթե չիրականացվի իրացվելիության ֆինանսական արդյունավետ կառավարում:

Գործարարության կայուն զարգացման նախադրյալներից է կազմակերպության իրացվելիության պատշաճ մակարդակի ապահովումը, որը ֆինանսական կառավարման հատուկ գործիքակազմ է պահանջում: Տնտեսվարող սուբյեկտի իրացվելիության գործակիցների սահմանաչափերը բավարար մակարդակի վրա պահելու գործում հաճախ հակադրում են գործարար ակտիվության մի շարք ցուցանիշներ, երբ շահութաբերության աճի, շրջանառու կապիտալի շրջապտույտի արագացման, ընդհանուր կապիտալի հատույցի ընդլայնման միտումները գործնականում հաճախ շրջանցում են իրացվելիության ապահովվածության անհրաժեշտ պահանջները:

Հետևաբար, տնտեսության իրական հատվածում գործարարություն ծավալող կազմակերպություններում ներկայումս անհրաժեշտություն է ձևավորվում հակակշիռներ սահմանելու վճարունակության, ինքնավարության, գործարար ակտիվության և իրացվելիության մակարդակների միջև, որպեսզի տեղի չունենա ֆինանսական հավասարակշռության խախտումներ և տնտեսական գործունեությունը չտուժի անվճարունակության կամ էական ֆինանսական ռիսկերի առկայության պատճառով:

Այս առումով, չափազանց կարևորվում է իրացվելիության ֆինանսական արդյունավետ կառավարման գործիքակազմի կիրառումը, որի շրջանակներում, տնտեսության իրական հատվածում գործող կազմակերպությունների ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տվյալների հիման վրա, իրականացվում են իրացվելիության և վճարունակության այլընտրանքային գնահատումներ:

Առանձնակի ուշադրություն են պահանջում նաև կազմակերպությունների իրացվելիության ֆինանսական կառավարման բարելավումները՝ հիմնված ակտիվների շրջանառելիության, դեբիտորական և կրեդիտորական պարտքերի օպտիմալացման, ֆինանսաարտադրական լծակի արդյունավետ գործածության համադրմամբ:

Հարկ է նշել, որ տնտեսության իրական հատվածի կազմակերպությունների իրացվելիության ֆինանսական կառավարման արդյունավետ մոտեցումների ներդրման և զարգացման հիմնախնդիրների քննարկումներն ու լուծման ուղիների առաջադրումները տեղ են գտել ինչպես օտարերկրյա տեսաբանների, այնպես էլ հայազգի հետազոտողների աշխատություններում: Սակայն, իրական հատվածում տնտեսական գործունեության իրացվելիության ֆինանսական կառավարման կատարելագործման հիմնախնդիրները դեռևս իրենց խորքային լուծումները չեն

ստացել նրանց հետազոտություններում, որն էլ կանխորոշել է ատենախոսության թեմատիկ ուղղվածությունն ու կատարված հետազոտության նպատակադրումները:

Հեղազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակն է ներկայացնել Արցախի Հանրապետության տնտեսության իրական հատվածի կազմակերպությունների իրացվելիության ֆինանսական կառավարման բարելավման ուղիներ, որոնք կնպաստեն ոլորտում ֆինանսական կառավարման արդյունավետության բարձրացմանը:

Ելնելով հետազոտության նպատակից, ատենախոսությունում առաջադրվել են հետևյալ խնդիրները.

➤ կատարել սննդարդյունաբերության կազմակերպությունների ֆինանսատնտեսական ցուցանիշների վերլուծություն, և բացահայտել ոլորտում առկա ակտիվների իրացվելիության մակարդակի ձևավորման առանձնահատկությունները,

➤ ելնելով տնտեսության իրական հատվածի կազմակերպությունների գործունեության ֆինանսատնտեսական առանձնահատկություններից՝ առաջարկել իրացվելիության ֆինանսական կառավարման մեթոդաբանական մոտեցումներ,

➤ ֆինանսական արդյունքների և իրացվելիության փոխկապակցված գնահատումների հիման վրա բացահայտել շահութաբերության և իրացվելիության մակարդակների հակակշռման կառավարելիության աստիճանը,

➤ մշակել կազմակերպությունների իրացվելիության ցուցանիշների և ֆինանսական ռիսկի փոխկապակցման ֆինանսական կառավարման համակարգ,

➤ գործոնային գնահատումների միջոցով ներկայացնել ֆինանսական լծակի և ակտիվների իրացվելիության ազդեցության մակարդակների հավասարակշռման կառավարման մեխանիզմ,

➤ ռեգրեսիոն վերլուծության միջոցով բացահայտել իրացվելիությունն ու գործարար ակտիվությունը բնութագրող ցուցանիշների միջև եղած հնարավոր սերտ կապերը,

➤ իրացվելիության պաշարի ապահովվածության տեսանկյունից մշակել տնտեսության իրական հատվածի կազմակերպություններում ֆինանսական ռիսկերի կանխարգելման կառավարման մեխանիզմ:

Հեղազոտության ուսումնասիրության օբյեկտը և առարկան: Հետազոտության ուսումնասիրության օբյեկտ է հանդիսացել Արցախի Հանրապետության տնտեսության իրական հատվածը՝ իրեն հատուկ գործառույթների ոլորտով:

Հետազոտության առարկան Արցախի Հանրապետության սննդի արդյունաբերության կազմակերպությունների իրացվելիության կառավարման շրջանակն է:

Հեղազոտության տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը:

Հետազոտության համար տեսական և տեղեկատվական հիմք են հանդիսացել կազմակերպությունների իրացվելիության կառավարման հայրենական և արտասահմանյան հետազոտողների աշխատությունները, գիտական հրատարակումները, աշխատանքային փաստաթղթերը, միկրոտնտեսական վերլուծությունները: Ատենախոսությունում օգտագործվել են սննդի արդյունաբերության ոլորտի զարգացմանը վերաբերող հաշվետվական տվյալներ, Արցախի Հանրապետության վիճակագրական և ուսումնասիրվող բնագավառին առնչվող այլ նյութեր:

Հետազոտության մեջ կիրառվել են գիտական աբստրակցիայի, ֆինանսատնտեսական, գործոնային և փորձագիտական վերլուծության մեթոդներ ու եղանակներ:

Հեղազոտության գիտական նորույթ: Հետազոտության գիտական նորույթն է հանդիսացել Արցախի Հանրապետության սննդի արդյունաբերության կազմակերպությունների իրացվելիության ֆինանսական կառավարման բարելավման ուղիների մշակումը: Մասնավորապես.

➤ սննդարդյունաբերության կազմակերպությունների ֆինանսատնտեսական ցուցանիշների վերլուծության արդյունքում մեկնաբանվել են ոլորտում առկա ակտիվների իրացվելիության մակարդակի ձևավորման առանձնահատկությունները, որի հիման վրա առաջարկվել են իրացվելիության ֆինանսական կառավարման մեթոդաբանական մոտեցումներ,

➤ տնտեսության իրական հատվածի կազմակերպությունների ֆինանսական արդյունքների և իրացվելիության փոխկապակցված գնահատումների հիման վրա բացահայտվել է, որ դրամական միջոցների շրջանառության արագացման հիման վրա ապահովելով շահութաբերության և ներդրումային գրավչության աճի միտումներ, միաժամանակ մեծանում է իրացվելիության ռիսկը, ինչը ստեղծում է կարճաժամկետ պարտավորությունների մարման անկարողության և անվճարունակության ձևավորման էական ռիսկեր:

➤ մշակվել է տնտեսության իրական հատվածի կազմակերպությունների իրացվելիության ցուցանիշների և ֆինանսական ռիսկի փոխկապակցման ֆինանսական կառավարման համակարգ՝ գործոնային գնահատումների միջոցով հնարավորություն ստեղծելով հավասարակշռել ֆինանսական լծակի և ակտիվների իրացվելիության ազդեցության մակարդակները, և կառավարել ֆինանսական պաշարների ապահովվածությունը,

➤ ռեգրեսիոն վերլուծությամբ բացահայտվել են իրացվելիության և գործարար ակտիվության ցուցանիշների միջև սերտ փոխկապակցվածություններ, որով հնարավորություն է ստեղծվում կիրառել ֆինանսական ռիսկերի կառավարման արդյունավետ գործիքներ, և իրականացնել իրացվելիության պաշարի ապահովվածության հիմնավոր գնահատումներ:

Հեղազոտության արդյունքների գիտագործնական և կիրառական նշանակությունը: Ատենախոսությունն իրենից ներկայացնում է Արցախի Հանրապետության տնտեսության իրական հատվածի կազմակերպությունների իրացվելիության ֆինանսական կառավարման գծով տեսական և գործնական ուսումնասիրությունների հիման վրա մշակված համալիր հետազոտություն, որը ներառում է որոշակի հիմնարար առաջարկություններ՝ ուղղված համապատասխան ոլորտի գործունեության ֆինանսական կայունության գործընթացի կառավարման հայեցակարգային ուղիների բացահայտմանը:

Հետազոտության արդյունքները, կատարված առաջարկությունները, մշակված մոտեցումներն ու մեթոդները կարող են գործնական կիրառություն գտնել ԱՀ սննդարդյունաբերության ոլորտում՝ նպաստելով իրական հատվածի կազմակերպությունների իրացվելիության ֆինանսական կայունության գնահատմանը,

ֆինանսական կառավարման, ինչպես նաև կազմակերպությունների իրացվելիության վերլուծության մեթոդաբանության բարելավմանը:

Հեղազոտության փորձարկումը և հրապարակումները: Հետազոտության հիմնադրույթների և գիտական արդյունքների շուրջ մի շարք աշխատանքային քննարկումներ են իրականացվել տնտեսագետ-տեսաբանների, Արցախի հանրապետության սննդի արդյունաբերության կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, ինչպես նաև կատարված հետազոտության առանձին դրույթներ քննարկվել և արժանացել են հավանության Արցախի պետական համալսարանի ֆինանսահաշվային ամբիոնում, ՀՈՒՄԿ հիմնադրամի գիտաժողովներում (Երևան 2019, Երևան 2020): Ատենախոսության մեջ քննարկված հարցերն ու հիմնադրույթները իրենց նախնական լուսաբանումն են ստացել հեղինակի 6 հրատարակումներում:

Արենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններ բաժնից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Այն ընդգրկում է 29 գծապատկեր, 56 աղյուսակ: Ատենախոսությունը շարադրված է 169 էջի վրա՝ առանց հավելվածների:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության **ներածության** մեջ հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակներն ու խնդիրները, օբյեկտը և առարկան, տեսամեթոդական և տեղեկատվական հիմքերը, հետազոտության գիտական նորույթները, գործնական նշանակությունը, ինչպես նաև հետազոտության արդյունքների փորձարկումն ու հրապարակումները:

Ատենախոսության **առաջին՝ «Իրացվելիության ֆինանսական կառավարման տեսական հիմքերը» գլխում** ուսումնասիրվել և ներկայացվել է «իրացվելիություն» և «վճարունակություն» եզրույթների վերաբերյալ տարբեր մոտեցումները, բացահայտվել է իրացվելիության տնտեսական բովանդակությունը:

Իրացվելիությունն ու վճարունակությունը փոխկապակցված են: Վճարունակությունը բնութագրվում է ընթացիկ ակտիվների իրացվելիության աստիճանով և վկայում, որ կազմակերպությունն ունի հնարավորություն լրիվությամբ մարել պարտավորությունները՝ մինչև մարման ժամկետների լրանալը¹:

Ատենախոսության **առաջին** գլխում ներկայացվել են կազմակերպության վճարունակության և իրացվելիության գնահատման հիմնական բացարձակ և հարաբերական ցուցանիշները: Իրացվելիության տարբեր ցուցանիշներ տալիս են ոչ միայն կազմակերպության ֆինանսական դրության կայունության բազմակողմանի բնութագիրը իրացվելի միջոցների տարբեր աստիճանի հաշվառման դեպքում, այլև պատասխանում են վերլուծական տեղեկատվության տարբեր արտաքին օգտագործողների հարցերին:


¹ Комплексный экономический анализ хозяйственной деятельности: Учебник для вузов /Лысенко Д.В. – М.: ИНФРА-М, 2008, стр. 251-252

Հաշվեկշռի իրացվելությունն ուսումնասիրելու նպատակով՝ ատենախոսության առաջին գլխում ներկայացվել են ակտիվների և պասիվների դասակարգման մոտեցումները ըստ Ա.Բայադյանի, Ա.Սարգսյանի և Լ.Էյխլերի, ինչպես նաև հաշվեկշռի իրացվելիությունը որոշելու համար կիրառվող գույքային և ֆունկցիոնալ մոտեցումները:

Այնուհետև անդրադարձ է կատարվել կազմակերպության իրացվելիության և վճարունակության կառավարման մեթոդներին:

Կազմակերպության իրացվելիության կառավարումը ենթադրում է կազմակերպության ֆինանսների այնպիսի տեղաբաշխում, որը թույլ կտա անհրաժեշտության դեպքում արագ մարել պարտավորությունները:

Ռուսական և արտասահմանյան տնտեսագետների կողմից առաջարկվող իրացվելիության կառավարման հիմնական մեթոդներն ընդհանրացված են Գծապատկեր 1-ում /դրանք վերաբերում են բանկերի իրացվելիության կառավարմանը/:



Գծապատկեր 1. Իրացվելիության կառավարման հիմնական մեթոդները²

Նշված մեթոդները հիմնականում կիրառելի են նաև արտադրական կազմակերպությունների համար: Մասնավորապես, առաջարկվում է կիրառել ակտիվների կառավարման, պասիվների կառավարման և իրացվելիության ցուցանիշների մեթոդները:

Ատենախոսությամբ նշվել է, որ իրացվելիության կառավարման գործընթացում առավել մեծ ուշադրություն պետք է հատկացվի դեբիտորական պարտքերի կառավարմանը:


Իրացվելիության և վճարունակության կառավարումը ցանկացած կազմակերպության ֆինանսական մենեջմենթի կարևոր բաղադրիչ է: Իրացվելիության հետ կապված խնդիրները կարող են բավականին լուրջ հետևանքներ ունենալ ընկերության համար, ընդհուպ մինչև սնանկացում: Կազմակերպության իրացվելիությունը և վճարունակությունը բարձրացնելու համար, առաջին հերթին, անհրաժեշտ է իրականացնել կազմակերպության ֆինանսական գործունեություն վերլուծություն:

Ներկայումս Արցախում ֆինանսական վերլուծությունը և կազմակերպության իրացվելիության կառավարումը ինչպես մասնավոր, այպես էլ հանրային հատվածում գտնվում է բավականին ցածր մակարդակի վրա, ինչը բացատրվում է տեղական

² Կազմվել է հեղինակի ուսումնասիրության հիման վրա

մասնագետների ոչ բավարար կրթությամբ և պետությունում ընդհանուր առմամբ ֆինանսական վերլուծության ոչ մեծ փորձով:

Մեր կողմից առաջարկվել է կազմակերպության ֆինանսական կառավարումն իրականացնել հետևյալ սխեմայով /Գծապատկեր 2/.



Գծապատկեր 2. Կազմակերպության իրացվելիության կառավարման հիմնական փուլերը³

Կազմակերպության իրացվելիության ֆինանսական կառավարման գործում առանձնակի ուշադրություն պետք է դարձվի ընթացիկ իրացվելիության կառավարմանը: Կազմակերպության ընթացիկ իրացվելիության բարձրացումը ֆինանսատնտեսական վիճակի բարելավման չափազանց կարևոր խնդիր է: Դրա լուծումը պետք է հանդիսանա ֆինանսական առողջացման ռազմավարության բաղկացուցիչ մասը:

Ընթացիկ իրացվելիության գործակցի արժեքը հաշվարկելու և կառավարելու նպատակով ատենախոսության առաջին գլում առաջարկվել է կիրառել հետևյալ մոտեցումը. ցուցանիշը հաշվարկել ոչ թե պահային տվյալներով, այլ օգտագործել միջինները, այսինքն.

$$q_{\text{մի}} = \frac{\overline{\text{ԸԱ}}}{\underline{\text{ԸՊ}}}$$

Այս դեպքում հաշվի է առվում նաև ժամանակի մեջ ցուցանիշի փոփոխությունը:

³ Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից

Այնուհետև առաջարկվել է իրականացնել ընթացիկ իրացվելիության գործոնային մոդելում փոփոխություններ՝ համարիչը և հայտարարը բաժանելով արտադրանքի իրացումից հասույթի վրա և բազմապատկելով ժամանակաշրջանի օրերի թվով: Կստանանք հետևյալ բանաձևը.

$$q_{\text{տի}} = \frac{\overline{L_U}}{\overline{L_{\text{Պ}}}} = \frac{\overline{L_U} \cdot 0 : \text{Հ}}{\overline{L_{\text{Պ}}} \cdot 0 : \text{Հ}} = \frac{S_{2\text{րջ.ԸԱ}}}{S_{2\text{րջ.ԸՊ}},$$


որտեղ՝ $S_{2\text{րջ.ԸԱ}}$ -ն՝ ընթացիկ ակտիվների շրջանառելիության տևողությունն է, օրերով, $S_{2\text{րջ.ԸՊ}}$ -ն՝ ընթացիկ պարտավորությունների շրջանառելիության տևողությունն է, օրերով, 0 -ն՝ հաշվետու ժամանակաշրջանի օրերի թիվն է, Հ-ն՝ հաշվետու ժամանակաշրջանի իրացումից հասույթն է:

Այստեղից պարզ է դառնում, որ ընթացիկ իրացվելիության գործակիցը կախված է ընթացիկ ակտիվների և ընթացիկ պարտավորությունների շրջանառելիությունից: Մասնավորապես, առաջարկված մոդելը թույլ է տալիս կառավարել ընթացիկ իրացվելիության գործակից արժեքը՝ նշված ցուցանիշների տևողությունը կարգավորելու միջոցով:

Երկրորդ՝ «**Իրացվելիության ֆինանսական կառավարման գնահատականը տնտեսության իրական հատվածի կազմակերպություններում /ԱՀ սննդի արտադրության կազմակերպությունների նյութերով/**» գլխում իրականացվել է ԱՀ սննդի արտադրության ոլորտի կազմակերպությունների վիճակի ընդհանուր գնահատում:

Ատենախոսի կողմից իրականացվել է ԱՀ արդյունաբերության /մասնավորապես՝ սննդի արտադրության/ ոլորտի առևտրային կազմակերպությունների գործունեությունը բնութագրող որոշ հիմնական ցուցանիշների դինամիկայի վերլուծություն, որից պարզվել է, որ 2007-2019թթ. ԱՀ տնտեսությունում ապահովվել է կայուն աճ:


Ուսումնասիրվել և ներկայացվել է ԱՀ արդյունաբերական ոլորտի կազմակերպությունների, իսկ այնուհետև՝ ԱՀ սննդի արտադրության կազմակերպությունների ֆինանսական արդյունքները բնութագրող ցուցանիշների դինամիկան /Գծապատկեր 3/:



Գծապատկեր 3. ԱՀ սննդի արտադրության կազմակերպությունների ֆինանսական արդյունքը բնութագրող հիմնական ցուցանիշների դինամիկան 2007-2019թթ.⁴

⁴ Կառուցվել է հեղինակի կողմից ԱՀ ԱՎԾ տվյալների հիման վրա

Այնուհետև իրականացվել է Արցախում գործող կազմակերպությունների ակտիվների և պասիվների դինամիկայի ուսումնասիրություն /Գծապատկեր 4/:



Գծապատկեր 4. ԱՀ սննդի արտադրության կազմակերպությունների ակտիվների և պասիվների դինամիկան 2007-2019թթ., հազ. դրամ⁵


Կազմակերպության ֆինանսական դրությունն ու կայունությունը մեծապես կախված են կազմակերպության կապիտալի ձևավորման աղբյուրների կառուցվածքի օպտիմալությունից (սեփական և փոխառու միջոցների հարաբերակցությունից) և ակտիվների կառուցվածքի օպտիմալությունից, ինչպես նաև ակտիվների և պասիվների հավասարակշռությունից՝ ըստ իրենց կատարած գործառույթների: Այդ պատճառով աշխատանքում վերլուծել է ԱՀ կազմակերպությունների միջոցների ձևավորման աղբյուրների կառուցվածքը և գնահատվել ֆինանսական կայունության ու ֆինանսական ռիսկի մակարդակները:

ԱՀ կազմակերպություններին անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել սեփական շրջանառու կապիտալի չափերի ավելացման և դրա մակարդակի օպտիմալացման համար: Դրա համար անհրաժեշտ է ճիշտ քաղաքականություն վարել վարկերի ստացման բնագավառում, օպտիմալացնել դրամական հոսքերը, քայլեր ձեռնարկել դեբիտորական պարտքերի և պաշարների օպտիմալացման համար, այսինքն ճիշտ կառավարել կազմակերպության ակտիվներն ու պասիվները:

Իրացվելիության ֆինանսական կառավարման գործընթացում առանձնահատուկ ուղղվածություն է ստանում նաև դեբիտորական և կրեդիտորական պարտքերի կառավարումը: Ատենախոսության մեջ ներկայացվել և ուսումնասիրվել է 2007-2019թթ. ԱՀ կազմակերպությունների դեբիտորական պարտքերի դինամիկան և կրեդիտորական պարտքերի դինամիկան, իրականացվել է դրանց կազմի ու կառուցվածքի վերլուծություն: Հատկանշական է, որ ԱՀ կազմակերպություններում դեբիտորական և կրեդիտորական պարտքերը ցուցաբերում են նմանատիպ շարժընթաց՝ երկու ցուցանիշներն էլ հիմնականում փոփոխվում են միևնույն ուղղությամբ և դրանց բացարձակ մեծությունները, որպես կանոն, իրար մոտ արժեքներ ունեն:

Կազմակերպության գործունեության ուսումնասիրման տեսանկյունից կարևորվում է ոչ այնքան նշված ցուցանիշների մեծությունը, որքան դրանց հարաբերակցությունը բնութագրող ցուցանիշը, որի դինամիկան ներկայացված է Գծապատկեր 5-ում:

⁵ Կառուցվել է հեղինակի կողմից ԱՀ ԱԿԾ տվյալների հիման վրա



Գծապատկեր 5. ԱՀ կազմակերպությունների ղեբիտորական և կրեդիտորական պարտքերի հարաբերակցությունը 2007-2019թթ.⁶

Ինչպես տեսնում ենք ԱՀ-ում ուսումնասիրվող ժամանակահատվածում ցուցանիշը ընդհանուր առմամբ տատանվել է 0.67-1.36 միջակայքում, իսկ արդյունաբերության ոլորտում՝ 0.62-1.50 միջակայքում, ցուցաբերելով առավելագույն արժեքները 2014թ.-ին, իսկ նվազագույնը՝ 2011թ.-ին /ցուցանիշի ցանկալի արժեքը հավասար է 1-ի/:

Մեր կողմից հաշվարկվել է նաև ԱՀ կազմակերպությունների ղեբիտորական և կրեդիտորական պարտքերի միջև կոռելյացիայի զույգ գործակիցը, որը կազմել է 0,837 /արդյունաբերությունում՝ 0,911/, ինչը նշանակում է, որ ուսումնասիրվող ցուցանիշների միջև գոյություն ունի սերտ փոխկապակցություն, ինչը ևս դրական է գնահատվում:

Ատենախոսության երկրորդ գլխում ներկայացվել է նաև Իրացվելիության գնահատման ցուցանիշների համակարգը՝ հիմնված «Ֆինանսական վիճակի մասին» և «Ֆինանսական արդյունքների մասին» հաշվետվությունների տեղեկատվության վրա:

Ֆինանսական կառավարման միջազգային և հայրենական տեսություններում, ինչպես նաև կազմակերպությունների տնտեսավարման պրակտիկայում, կիրառվում են ցուցանիշների մեծ համախումբ, որոնք թույլ են տալիս գնահատել կազմակերպությունների իրացվելիությունը՝ ռիսկի թույլատրելի մակարդակի, եկամտաբերության և ֆինանսական կայունության ապահովման տեսանկյունից:

Ատենախոսության մեջ առաջարկվել է համակարգել գրականության մեջ առավել հաճախ հանդիպող ցուցանիշները, ինչպես նաև սահմանել սննդի արտադրության կազմակերպությունների համար գնահատականների կիրառման ոլորտն ու համարժեքությունը:

Առաջադրված խնդրի լուծման համար, ինչպես նաև սննդի արդյունաբերության կազմակերպությունների իրացվելիության և վճարունակության վիճակն և զարգացման միտումներն ուսումնասիրելու համար, 2019թ.-ին ԱՀ ԱՎԾ հաշվետվություն ներկայացված ոլորտի 61 կազմակերպություններից ընտրվել են յոթը: Հաշվի են առնվել կազմակերպությունների ակտիվների մեծությունը, հասույթի գումարը և շուկայում դրանց գործունեության ժամկետները (նվազագույնը 5 տարի):

ԱՀ-ում գործող սննդի արտադրության յոթ կազմակերպությունների փաստացի տվյալների հիման վրա իրականացվել է հաշվեկշռի իրացվելիության վերլուծություն՝

⁶ Հաշվարկվել և կառուցվել է հեղինակի կողմից

կիրառելով գույքային և ֆունկցիոնալ մոտեցումները, որի համար ուսումնասիրվող կազմակերպությունների ակտիվները դասակարգվել են ըստ դրանց իրացվելիության անկման, իսկ պասիվները՝ ըստ պարտավորությունների մարման ժամկետների ավելացման, համապատասխանաբար չորսական հիմնական խմբերի՝ օգտվելով կազմակերպությունների 2013-2019թթ.-երի «Ֆինանսական վիճակի մասին» հաշվետվությունների տվյալներից:

Ատենախոսության երկրորդ գլխում գնահատվել է նաև ԱՀ սննդի արտադրության ընտրված յոթ կազմակերպությունների ընթացիկ և հեռանկառային իրացվելիությունը՝ բացարձակ մեծությամբ, որից հետո, ֆինանսական գործակիցների օգնությամբ իրականացվել է իրացվելիության մանրամասն վերլուծություն /Աղյուսակ 1/:

Ընդ որում հարաբերական ցուցանիշների հաշվարկը սննդի արդյունաբերության կազմակերպությունների տվյալներով կատարվել է՝ կիրառելով տարբեր մեթոդաբանություն՝

1. հաշվարկելով առանձին տնտեսավարող սուբյեկտների ցուցանիշները՝ միջինացնելով մեդիանայով.

2. իրականացնելով ցուցանիշների հաշվարկը՝ կազմակերպությունների պասիվների /ակտիվների/ ընդհանուր գումարով:

Մեդիանայի առավելությունները կայանում են նրանում, որ այն կիրառելի է թվային շարքի ցանկացած բաշխվածության դեպքում, ավելի կայուն է, քանի որ հարմար է ասիմետրիկ բաշխվածությունների համար, իրատեսական է արտացոլում միջին միտումները:

Աղյուսակ 1.

ԱՀ սննդի արտադրության կազմակերպությունների իրացվելիության ցուցանիշները /տարեվերջի դրությամբ/

Ցուցանիշը	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019
Գ _{ԻԲ}	0,880⁷	0,292	0,879	0,200	0,384	0,912	0,377	0,337	0,234	0,235	0,280	0,170	0,179
	0,430 ⁸	0,221	0,344	0,200	0,129	0,185	0,255	0,197	0,303	0,218	0,664	0,506	0,382
Գ _{ԽԱ}	1,172	0,755	1,928	0,865	0,824	1,580	1,097	1,000	0,639	1,271	0,616	0,686	0,802
	1,032	0,537	1,018	0,714	0,589	0,680	0,956	0,744	0,591	0,550	1,492	1,285	1,226
Գ _{ԻԸ}	2,009	1,698	2,999	1,590	1,661	3,003	1,880	1,603	1,551	1,711	1,519	1,616	1,422
	1,419	0,901	1,621	1,270	1,236	1,485	1,627	1,298	0,983	0,898	2,240	2,002	1,839
Գ _{ԻԵԽԻ}	1,373	1,090	1,510	1,336	0,918	1,707	0,744	0,762	0,687	0,767	0,744	0,677	0,658
	1,037	0,545	0,749	0,602	0,560	0,826	0,646	0,626	0,577	0,603	0,834	0,731	0,734

Ելնելով Աղյուսակ 1-ում բերված տվյալներից կարող ենք եզրակացնել, որ ԱՀ սննդի արտադրության կազմակերպությունների իրացվելիության ցուցանիշները /բացառությամբ Գ_{ԻԲ} ցուցանիշի/ հիմնականում զիջում են իրենց նորմատիվներին: Անհրաժեշտ է

⁷Հաշվարկները կատարվել են առանձին տնտեսավարող սուբյեկտների ֆինանսական հաշվետվությունների տվյալների հիման վրա և միջինացվել՝ հաշվարկելով մեդիանաները

⁸Հաշվարկները կատարվել են կազմակերպությունների պասիվների /ակտիվների/ ընդհանուր գումարով

նաև նշել, որ դիտվում է ցուցանիշների արժեքների իջեցման բացասական միտումը, ինչը հիմնականում պայմանավորված է ընթացիկ ակտիվների աճի տեմպի համեմատ ընթացիկ պարտավորությունների առավել բարձր աճի տեմպով: Ընդհանուր առմամբ հանրապետության սննդի արդյունաբերության կազմակերպությունները կորցնում են իրենց վճարունակությունը:

Իրացվելիության ցուցանիշները ավելի խորը ուսումնասիրելու նպատակով և ԱՀ իրական հատվածի /սննդի արտադրության օրինակով/ կազմակերպությունների իրացվելիության ֆինանսական կառավարման հիմնախնդիրները բացահայտելու համար, ատենախոսության մեջ իրականացվել է իրացվելիությունը բնութագրող ցուցանիշների հաշվարկ և գնահատում՝ կիրառելով ժամանակակից տարբեր մոտեցումներ՝ ըստ Ա.Բայադյանի, Վան Խորնի, Եֆիմովայի և Էյխլերի:

Օգտագործելով Կրեյնիհայի առաջարկված բանաձևը՝ մեր կողմից իրականացվել է ԱՀ սննդի արդյունաբերության կազմակերպությունների համար ընթացիկ իրացվելիության նորմատիվային արժեքի հաշվարկ /աղյուսակ 2/:

Աղյուսակ 2.

ԱՀ սննդի արդյունաբերության կազմակերպությունների ընթացիկ իրացվելիության նորմատիվային արժեքի հաշվարկ⁹

Ցուցանիշը	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	Միջինը
Ընթացիկ իրացվելիության գործակցի նորմա	1,3	1,4	1,5	1,5	1,6	1,8	1,7	1,5	1,4	1,3	1,7	1,7	1,6	1,5


Ինչպես տեսնում ենք, սննդի արդյունաբերության կազմակերպությունների համար որպես ընթացիկ իրացվելիության գործակցի նորմատիվային արժեք կարելի է ընդունել 1.5-ը:

«Ֆինանսական վիճակի մասին» և «Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին» հաշվետվությունների տեղեկատվության համատեղ օգտագործումը թույլ է տալիս միավորել իրացվելիության և վճարունակության գնահատումը ակտիվների և պարտավորությունների օգտագործման արդյունավետության և շահութաբերության հետ: «Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին» հաշվետվությունն արտացոլում է որոշակի ժամանակահատվածում կազմակերպության եկամուտների և ծախսերի ձևավորման և դինամիկայի գործընթացը:

Ատենախոսության մեջ իրականացվել է ԱՀ սննդի արտադրության առանձին կազմակերպությունների և ամբողջ ոլորտի կտրվածքով արտադրական պարբերաշրջանների, դեբիտորական պարտքերի շրջանառելիության տևողության, գործառնական պարբերաշրջանների, կրեդիտորական պարտքերի շրջանառելիության տևողության, ֆինանսական պարբերաշրջանների, ինչպես նաև իրացվելիության ինդեքսի հաշվարկը և ուսումնասիրությունը դինամիկայում: Հաշվարկներից պարզվել է, որ ընդհանուր առմամբ ԱՀ սննդի արտադրության կազմակերպություններում ֆինանսական պարբերաշրջանը դանդաղում է /երկարում է/:

⁹ Հաշվարկները կատարվել են հեղինակի կողմից՝ ԱՀ սննդի արդյունաբերության կազմակերպությունների «Ֆինանսական վիճակի մասին» հաշվետվությունների ամփոփ տվյալների հիման վրա:

ԱՀ սննդի արտադրության կազմակերպությունների շրջանառելիության ցուցանիշներն ընդհանրացված կերպով ներկայացված են Գծապատկեր 6-ում:



Գծապատկեր 6. ԱՀ սննդի արտադրության կազմակերպությունների շրջանառելիության ցուցանիշների դինամիկան և կապը ընթացիկ իրացվելիության հետ, 2007-2019թթ.¹⁰


Ինչպես տեսնում ենք Գծապատկեր 6-ից, սկսած 2009թ.-ից, ֆինանսական պարբերաշրջանը կազմող բոլոր բաղադրիչներն (բացառությամբ՝ 2016թ.) աճում են: Ուսումնասիրվող ժամանակահատվածում ԱՀ-ում տեղի է ունեցել սննդի արտադրության կազմակերպությունների գործունեության դանդաղեցում: Ընդ որում աճել է թե՛ ակ-տիվների՝ պաշարների և դեբիտորական պարտքերի, և թե՛ կրեդիտորական պարտ-քերի շրջանառելիության տևողությունները: Սակայն հարկ է նշել, որ միաժամանակ ար-ձանագրվել է ոլորտում ընդհանուր իրացումից հասույթի աճ (առանձին կազմակեր-պություններում ցուցանիշը ուսումնասիրման վերջին տարիներին նվազման միտում է ցուցաբերել):

Երրորդ՝ «Կազմակերպության իրացվելիության կառավարման արդի հիմնախնդիրները և բարելավման հեռանկարները /ԱՀ սննդի արտադրության կազմակերպությունների նյութերով/» գլխում ուսումնասիրվել է կազմակերպության իրացվելիության գնահատման ցուցանիշների գործող համակարգը և տրվել ֆինանսական կառավարման գնահատականը:

Ֆինանսական կառավարման խնդիրներից մեկն է հավասարակշռել իրաց-վելիության և շահութաբերության ցուցանիշները: Շահութաբերության ցուցանիշները թույլ են տալիս գնահատել ընկերության գործունեության արդյունավետությունը:

Ատենախոսության մեջ ներկայացվել են շահութաբերության ցուցանիշները և իրականացվել է ԱՀ սննդի արտադրության կազմակերպությունների շահութաբերու-յան ամփոփ ցուցանիշների հաշվարկը /Գծապատկեր 7/:

¹⁰ Կառուցվել է հեղինակի կողմից



Գծապատկեր 7. ԱՀ սննդի արտադրության կազմակերպությունների շահութաբերության ցուցանիշների դինամիկան 2007-2019թթ.¹¹

Այնուհետև սննդի արտադրության ուսումնասիրվող կազմակերպություններից ընտրվել է մեկը՝ «Լուսակերտ» ՍՊԸ-ն, որի տվյալներով հաշվարկվել և վերլուծվել են շահութաբերությունը բնութագրող հիմնական ցուցանիշները, ինչպես նաև կազմակերպության կրեդիտորական պարտքերի և դեբիտորական պարտքերի ինտենսիվությունը բնութագրող ցուցանիշները:

Ատենախոսության երրորդ գլխում իրականացվել է նաև նշված կազմակերպության ընդհանուր կապիտալի և սեփական կապիտալի շահութաբերության գործոնային վերլուծությունը՝ բացահայտելով վերջինների վրա ազդող գործոնները:

Կազմակերպության ընթացիկ (աշխատանքային) կապիտալի կառավարումն իրականացվում է երկու նպատակներին համապատասխան՝ մի կողմից՝ ընկերության շահութաբերության աճի, և մյուս կողմից՝ նրա իրացվելիության պահպանման:¹² Ընթացիկ կապիտալի կառավարման նպատակը կարող է ձևակերպվել որպես ընկերության շահութաբերության աճ՝ ապահովելով անհրաժեշտ իրացվելիության մակարդակ: Նշված նպատակին հասնելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել և բացահայտել կազմակերպության ֆինանսական պարբերաշրջանի կապը իրացվելիության և շահութաբերության հետ:

Ատենախոսության մեջ ֆինանսական պարբերաշրջանի, շահութաբերության և իրացվելիության ցուցանիշների կապը բացահայտելու նպատակով՝ ուսումնասիրվել են ԱՀ սննդի արտադրության 27 կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների տվյալները, որոնց հիման վրա կազմվել են ռեգրեսիոն մոդելներ:

Սննդի արդյունաբերությունը հանդիսանում է ԱՀ տնտեսության հիմնական ոլորտներից մեկը, քանի որ ապահովում է երկրի բնակչության զարգացման բարձր մակարդակ և կյանքի որակ: Այս ոլորտն արտադրում է զանգվածային սպառման արտադրանք, որը վայելում է առօրյա պահանջարկն ու արագ իրացվում է, ինչի արդյունքում կազմակերպությունների ֆինանսական պարբերաշրջանը կարճ է: Սննդի

¹¹ Կառուցվել է հեղինակի կողմից /գծապատկերում բացակայում է սեփական կապիտալի շահութաբերության ցուցանիշների պատկերը/

¹² St 'u Shin H., Soenen L. Efficiency of Working Capital Management and Corporate Profitability // Financial Practice and Education. 1998. Vol. 8, N 2. P. 37-45.

արդյունաբերության կազմակերպություններին բնորոշ առանձնահատկությունների շարքում նշվում են այնպիսիները, ինչպիսիք են արտադրվող արտադրանքի բարձր նյութատարությունը, արտադրության և աշխատուժի օգտագործման սեզոնայնության պատճառով տարվա ընթացքում արտադրական միջոցների անհավասար բեռնվածությունը, պատրաստի արտադրանքի պահպանման և իրացման սահմանափակ ժամկետները, կազմակերպությունների առաջադեմ տեխնոլոգիաներով և ժամանակակից տեխնիկայով հագեցվածության անհրաժեշտությունը, արտադրության ուղղվածությունը սպառողի վրա, ինչը դարձնում է սննդի արդյունաբերությունը զգայուն պահանջարկի փոփոխության նկատմամբ, հետևաբար նշված ոլորտում ընթացիկ ակտիվների կառավարումը իրացվելիության ֆինանսական կառավարման գործընթացում մեծ դեր է կատարում:

Էկոնոմետրիկ ռեգրեսիոն մոդելները կառուցելու ժամանակ մեր կողմից օգտագործվել են երկու կախյալ փոփոխականներ՝ ակտիվների շահութաբերությունը և ընկերության իրացվելիությունը: Մոդելների հիմնական անկախ փոփոխականը ընկերության ֆինանսական պարբերաշրջանի ցուցանիշն է, որը ներկայացված է զուտ առևտրային պարբերաշրջանի տեսքով (NTC): Բացի այդ, ակտիվների շահութաբերության վերլուծության ժամանակ դիտարկվել են երկու տեսակի մոդելներ՝ վերահսկող փոփոխականի ներառմամբ (երկգործոնային մոդելներ) և առանց ներառման (միագործոն մոդելներ): Որպես վերահսկող փոփոխական ընտրվել է իրացման շահութաբերության ցուցանիշը (ROS), որը ցույց է տալիս վաճառքի զուտ գործառնական եկամտի մասնաբաժինը հաշվետու ժամանակաշրջանի իրացումից հասույթում և հանդիսանում է ակտիվների շահութաբերության հիմնական շարժիչներից մեկը: Միաժամանակ ուսումնասիրվել է ընթացիկ իրացվելիության և ակտիվների շահութաբերության փոխկապվածությունը:

Արդյունքում կառուցվել են աղյուսակ 3-ում ներկայացված ռեգրեսիոն մոդելները:

Աղյուսակ 3.

Շեքագրության ռեգրեսիոն մոդելները

Կախյալ փոփոխականներ	Մոդելը	Անկախ փոփոխականներ	
		Չուտ առևտրային պարբերաշրջան	Ընթացիկ իրացվելիություն
Ակտիվների շահութաբերություն	Երկգործոն մոդել	$RNOA = a_0 + a_1 \cdot NTC + a_2 \cdot ROS + s_i$	-
	Միագործոն մոդել	$RNOA = b_0 + b_1 \cdot NTC + t_i$	$RNOA = c_0 + c_1 \cdot CR + u_i$
Ընթացիկ իրացվելիություն	Միագործոն մոդել	$CR = d_0 + d_1 \cdot NTC + v_i$	-

Ուսումնասիրվող ցուցանիշների նկարագրողական վիճակագրությունը ներկայացված է աղյուսակ 4-ում: Ընտրանքի մեջ են ընկել ինչպես շահութաբեր, այնպես էլ ոչ շահութաբեր կազմակերպությունները: Ֆինանսական պարբերաշրջանը ուսումնասիրվող կազմակերպություններում ընդունում է ինչպես դրական, այնպես էլ բացասական արժեքներ, ընդ որում միջին ֆինանսական պարբերաշրջանը դրական է:

Աղյուսակ 4.

Ռեզրեսիոն մոդելների փոփոխականների նկարագրային վիճակագրությունը /ԱՀ սննդի արտադրության կազմակերպություններում/¹³

Փոփոխականը ¹⁴	Միջին արժեքը	Ստանդարտ շեղումը	Նվազագույն արժեքը	Առավելագույն արժեքը
RNOA	8,4	216,5	-891,0	356,3
CR	223,8	246,6	0,2	956,3
ROS	-15,9	65,7	-293,5	27,1
NTC	103,2	449,5	-889,0	1995,9

Աղյուսակ 5-ում ներկայացված են մոդելների ցուցանիշների գնահատման արդյունքները, ընդունելով որպես կախյալ փոփոխական առաջի դեպքում ակտիվների շահութաբերությունը և երկրորդ դեպքում՝ ընթացիկ իրացվելիությունը:

Աղյուսակ 5.

Գծային ռեզրեսիոն մոդելների պարամետրերի գնահատման արդյունքները /ԱՀ սննդի արտադրության կազմակերպություններում/¹⁵

Անկախ փոփոխականները	RNOA			CR
Constant	27,785	11,671	33,810	192,627
NTC	-0,076	-0,031	-	0,302
ROS	0,720	-	-	-
CR	-	-	-0,113	-

Ֆինանսական պարբերաշրջանի աճը պաշարների և դեբիտորական պարտքերի լրացուցիչ ներդրումների շնորհիվ հանգեցնում է ակտիվների շահութաբերության նվազեցմանը: Հետևաբար, ակտիվների շահութաբերությունը բարձրացնելու նպատակով կազմակերպությունները պետք է նվազեցնեն իրենց ֆինանսական պարբերաշրջանը: Սակայն, վերջինիս չափից ավելի նվազումը (այդ թվում՝ այդ ցուցանիշի բացասական արժեքին հասնելը) կարող է կազմակերպության համար անբարենպաստ հետևանքների հանգեցնել ինչպես շահութաբերության, այնպես էլ իրացվելիության տեսանկյունից: Հետևաբար, բացասական ֆինանսական պարբերաշրջանով ընկերությունների համար շահավետ կլինի ոչ թե նվազեցնել, այլ մեծացնել իրենց ֆինանսական պարբերաշրջանը: Վերլուծության արդյունքները թույլ են տալիս եզրակացնել, որ կազմակերպությունները շահութաբերության աճի նպատակով ձգտում են զրոյական ֆինանսական պարբերաշրջանի: Կազմակերպությունների զրոյական ֆինանսական պարբերաշրջանի առկայությունը, փաստորեն, նշանակում է, որ ժամանակի պահերը, երբ կազմակերպությունն իր արտադրանքի համար ստանում է դրամական միջոցներն ու երբ կատարում է հաշվարկները իր մատակարարների հետ, համընկնում են: Այլ կերպ ասած, այդ դեպքում կազմակերպությունը դրամական միջոցների դեֆիցիտ չի զգում և արտաքին աղբյուրներից իր գործառնությունները ֆինանսավորելու կարիք չունի:

¹³ Հաշվարկները կատարվել են հեղինակի կողմից

¹⁴ RNOA, CR և ROS ցուցանիշները վերցված են տոկոսներով, իսկ NTC՝ օրերով:

¹⁵ Հաշվարկները կատարվել են հեղինակի կողմից

Բացի այդ վերլուծության արդյունքներից հետևում է նաև ակտիվների շահութաբերության և ընթացիկ իրացվելիության ցուցանիշների միջև հակադարձ կախվածությունը, ինչն էլ հանդիսանում է շահութաբերության աճի արգելք, քանզի իրացվելիության գործակցի արժեքի նորմայից իջեցումը բերում է կազմակերպությանը անվճարունակության:

Ի տարբերություն վերը բերված կախվածության, ֆինանսական պարբերաշրջանի ցուցանիշի և ընթացիկ իրացվելիության մեծության միջև եղած կապն ուղղակի բնույթ է կրում՝ ֆինանսական պարբերաշրջանի մեծության աճը հանգեցնում է ընթացիկ իրացվելիության ցուցանիշի աճին: Ընթացիկ իրացվելիության ցուցանիշի արժեքի ավելացումը ենթադրում է կազմակերպության ընթացիկ ակտիվների մեծության ավելացում կամ ընթացիկ պարտավորությունների չափի նվազում: Հաշվեկշռի անփոփոխ հանրագումարի դեպքում երկուսն էլ ենթադրում են ֆինանսական պարբերաշրջանի մեծության աճ:

Բացահայտված կախվածության օգնությամբ կարելի է առանձնացնել ընթացիկ իրացվելիության գործակցի համար առաջարկվող արժեքների շրջանակը: Այսպիսով, եթե նշենք ֆինանսական պարբերաշրջանի պահանջվող արժեքը, ապա ռեզրեսիայի հավասարումներից կարելի է ստանալ նաև իրացվելիության գործակցի առաջարկվող համապատասխան արժեքը: Օրինակ, եթե սննդի արտադրության կազմակերպության զուտ առևտրային պարբերաշրջանի տևողությունը 60 օր է, ապա, օգտագործելով ռեզրեսիոն հավասարումը, մենք ստանում ենք ընթացիկ իրացվելիության գործակցի արժեքը՝ հավասար $2.1 (192.627\% + 0.302 \cdot 60\text{օր} = 210.7\% \approx 2.1)$:

Ընթացիկ իրացվելիության գործակցի և ֆինանսական պարբերաշրջանի միջև փոխկապակցվածության մոդելը թույլ է տալիս լուծել նաև հետադարձ խնդիրը. կազմակերպության իրացվելիության տրված մակարդակով որոշել ֆինանսական պարբերաշրջանի անհրաժեշտ մեծությունը: Այսինքն, եթե նշենք իրացվելիության գործակցի պահանջվող արժեքը (պահանջվող արժեքների միջակայքը), ապա ռեզրեսիայի հավասարումներից կարող ենք ստանալ համապատասխան միջակայքը նաև ֆինանսական պարբերաշրջանի համար: Օրինակ, եթե ընթացիկ իրացվելիության գործակցի համար պահանջվող արժեքները գտնվում են [2-3] ([200%; 300%]) միջակայքում, սննդի արտադրության կազմակերպությունների ֆինանսական պարբերաշրջանը (NTC) պետք է ընդունի արժեքները [25; 355] միջակայքից: Դրացից երկար պարբերաշրջանի դեպքում կազմակերպությունների ընթացիկ կապիտալի կառավարումը կզնահատվի անարդյունավետ և կնպաստի շահույթի կրճանմանը և ակտիվների շահութաբերության նվազեցմանը: Հաշվարկածից կարճ պարբերաշրջանի դեպքում կազմակերպությունները կկորցնեն իրենց իրացվելիությունը:

Ատենախոսության երրորդ գլխում իրականացվել է նաև ԱՀ սննդի արտադրության ընտրված կազմակերպության տվյալներով այնպիսի ֆինանսական գործակիցների վերլուծություն, ինչպիսիք են՝ ակտիվների իրացվելիությունը, շահութաբերությունը, շրջանառելիությունը, գործարար ակտիվությունը, ֆինանսական կայունությունը և այլնի հաշվարկը և ուսումնասիրությունը, կատարվել է որոշ ցուցանիշների գործոնային վերլուծությունը:

Ատենախոսության «**Եզրակացություններ**» բաժնում ընդհանրացվել և ամփոփվել են հետազոտության հիմնական արդյունքները.

1. Կազմակերպությունների գործունեությունը, շուկայական պայմաններում, ենթադրում է իրացվելիությունը՝ որպես ֆինանսական վիճակի, վճարունակության, գործարարության, արժեթղթերի շուկայական գրավչության, վարկի տրամադրման և ստացման պայմանների ու հնարավորությունների գնահատման առանցքային չափանիշներից մեկը: Կազմակերպություններն իրացվելի վիճակում պահելու համար պարտադիր և կարևոր է իրացվելիության կառավարումը:

2. Հիմնք ընդունելով աշխարհում կիրառվող իրացվելիության կառավարման հիմնական մեթոդները, որոնք վերաբերում են բանկերի իրացվելիության կառավարմանը, առաջարկվել է կիրառել դրանք նաև արտադրական կազմակերպությունների համար: Մասնավորապես, առաջարկվել է կիրառել ակտիվների կառավարման, պասիվների կառավարման և իրացվելիության ցուցանիշները: Իրացվելիության կառավարման գործընթացում առավել մեծ ուշադրություն պետք է հատկացվի դեբիտորական պարտքերի կառավարմանը: Գործնականում դեբիտորական պարտքերի կառավարումն իրենից ներկայացնում է միջոցների շրջանառելիության վերահսկողություն:

3. Առաջարկվել է կազմակերպության ֆինանսական կառավարումն իրականացնել հետևյալ սխեմայով՝ իրականացնել կազմակերպության գնահատումն իրացվելիության տեսանկյունից, կատարել հաշվեկշռի իրացվելիության գնահատում, իրականացնել իրացվելիության վրա ազդող գործոնների վերլուծություն, ակտիվների և պասիվների կառուցվածքի վերլուծություն, դրանց կառավարման համակարգի արդյունավետության գնահատում, իրացվելիության գործակիցների հաշվարկ ու վերլուծություն, և մշակել առաջարկություններ՝ իրացվելիության հետագա կառավարման համար:

4. Ընթացիկ իրացվելիության գործակցի արժեքը հաշվարկելու և կառավարելու նպատակով առաջարկվել է կիրառել հետևյալ մոտեցումը. ցուցանիշը հաշվարկել ոչ թե պահային տվյալներով, այլ օգտագործել միջինները, այսինքն՝ ընթացիկ ակտիվների միջին տարեկան արժեքը հարաբերելով ընթացիկ պարտավորությունների միջին տարեկան արժեքին, որի դեպքում հաշվի է առվում նաև ժամանակի մեջ ցուցանիշի փոփոխությունը: Այնուհետև առաջարկվել է իրականացնել ընթացիկ իրացվելիության գործոնային մոդելում փոփոխություններ՝ համարիչը և հայտարարը բաժանելով արտադրանքի իրացումից հասույթի վրա և բազմապատկելով ժամանակաշրջանի օրերի թվով՝ ստանալով հետևյալ կախվածությունը. ընթացիկ իրացվելիությունը հավասար է ընթացիկ ակտիվների և ընթացիկ պարտավորությունների շրջանառելիության տևողությունների հարաբերակցությանը, ինչն իր հերթին թույլ է տալիս իրականացնել իրացվելիության ֆինանսական կառավարում՝ ընթացիկ ակտիվների և ընթացիկ պարտավորությունների շրջանառելիության տևողության նկատմամբ ազդեցություն ունենալու միջոցով:

5. Ներկայումս Արցախում ֆինանսական վերլուծությունը և կազմակերպության իրացվելիության կառավարումը՝ ինչպես մասնավոր, այպես էլ հանրային հատվածում,

գտնվում է բավականին ցածր մակարդակում, ինչը բացատրվում է տեղական մասնագետների ոչ բավարար կրթությամբ և պետությունում ընդհանուր առմամբ ֆինանսական վերլուծության ոչ մեծ փորձով:

6. Կազմակերպությունների իրացվելիության կառավարման գնահատման նպատակով առաջարկվել և իրականացվել են հետևյալ քայլերը.

➤ Վերլուծվել են ԱՀ արդյունաբերության /մասնավորապես՝ սննդի արտադրության/ ոլորտի կազմակերպությունների հիմնական ցուցանիշները՝ բացահայտելով զարգացման ձեռքբերված մակարդակը և բացթողումները:

➤ Գնահատվել և վերլուծվել են հետազոտվող կազմակերպությունների իրացվելիության ցուցանիշները՝ հիմք ընդունելով «Ֆինանսական վիճակի մասին» հաշվետվության տվյալները:

➤ Գնահատվել և վերլուծվել է հետազոտվող կազմակերպությունների իրացվելիությունը՝ օգտագործելով «Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին» հաշվետվության տվյալները:

7. Բացահայտվել է, որ ԱՀ կազմակերպություններում, ընդհանուր առմամբ, հաշվեկշռի իրացվելիությունը չի ապահովվում: Ինչ վերաբերում է իրացվելիության գործակիցներին, ապա նրանց մեծությունները չեն հասնում սահմանված նորմատիվներին: Ուստի ԱՀ կազմակերպությունների մեծամասնության մոտ առկա է իրացվելիության խնդիր, որի լուծման ուղղություններից մեկը կարող է դառնալ դեբիտորական և կրեդիտորական պարտքերի ճիշտ կառավարումը:

8. ԱՀ սննդի արդյունաբերության կազմակերպությունների իրացվելիության և վճարունակության վիճակի ու զարգացման միտումներն ուսումնասիրելու համար 2019թ. ԱՀ ԱՎԾ հաշվետվություն ներկայացված ոլորտի 61 կազմակերպություններից ընտրվել են յոթը: Հաշվի են առնվել կազմակերպությունների ակտիվների մեծությունը, հասույթի գումարը և շուկայում դրանց գործունեության ժամկետը: ԱՀ-ում գործող սննդի արտադրության յոթ կազմակերպությունների փաստացի տվյալների հիման վրա մեր կողմից իրականացվել է հաշվեկշռի իրացվելիության վերլուծություն՝ կիրառելով գույքային և գործառույթային մոտեցումները: Կատարվել է, ԱՀ իրական հատվածի կազմակերպությունների համար, բացարձակ իրացվելիության, արագ իրացվելիության, ընթացիկ իրացվելիության և իրացվելիության ընդհանուր ցուցանիշների հաշվարկ:

Կատարվել է վերոնշյալ ցուցանիշների հաշվարկ նաև սննդի արդյունաբերության կազմակերպությունների տվյալներով՝ կիրառելով տարբեր մեթոդաբանություն.

- հաշվարկելով առանձին տնտեսավարող սուբյեկտների ցուցանիշներ՝ միջինացնելով մեդիանայով.

- իրականացնելով ցուցանիշների հաշվարկ՝ կազմակերպությունների պասիվների /ակտիվների/ ընդհանուր գումարով:

Արդյունքում առաջարկվել է, ԱՀ իրական հատվածի, մասնավորապես, սննդի արտադրության կազմակերպությունների, իրացվելիության ընդհանրացված պատկերը ճիշտ կազմելու համար միջին թվաբանականի փոխարեն կիրառել մեդիանան: Մեդիանայի առավելությունները կայանում են նրանում, որ այն կիրառելի է թվային շարքի ցանկացած բաշխվածության դեպքում, ավելի կայուն է, քանի որ հարմար է

ասիմետրիկ բաշխվածությունների համար, ադեկվատ է արտացոլում միջին միտումները:

9. Իրացվելիության ցուցանիշները ավելի խորը ուսումնասիրելու նպատակով և ԱՀ իրական հատվածի /սննդի արտադրության օրինակով/ կազմակերպությունների իրացվելիության ֆինանսական կառավարման հիմնախնդիրները բացահայտելու համար իրականացվել է իրացվելիությունը բնութագրող ցուցանիշների հաշվարկ և գնահատում՝ կիրառելով ժամանակակից տարբեր մոտեցումներ (Ա. Բայադյանի, Վան Խորնի, Եֆիմովայի, Էյխելերի):

10. Իրացվելիության լիարժեք գնահատական և իրացվելիության կառավարման խնդիրներ լուծելու նպատակով հիմնական չորս ցուցանիշների հետ մեկտեղ առաջարկվել է հաշվարկել նաև կազմակերպության ֆինանսական պարբերաշրջանը և այն ուսումնասիրել ընթացիկ իրացվելիության ցուցանիշի հետ կախվածության տեսանկյունից: Մեր կողմից իրականացվել են ԱՀ սննդի արտադրության առանձին կազմակերպությունների և ամբողջ ոլորտի կտրվածքով արտադրական, գործառնական և ֆինանսական պարբերաշրջանների հաշվարկ՝ կիրառելով աշխատանքում նշված երկու եղանակները, ուսումնասիրվել և բացահայտվել է դրանց փոխկապվածությունը ընթացիկ իրացվելիության գործակցի հետ:

11. Ֆինանսական կառավարման խնդիրներից մեկը իրացվելիության և շահութաբերության ցուցանիշների հավասարակշռության ապահովմն է: ԱՀ սննդի արտադրության ուսումնասիրվող կազմակերպությունների ցուցանիշների արժեքների հաշվարկն ու վերլուծությունը թույլ են տալիս եզրակացնել, որ ընթացիկ իրացվելիության ավելացմանը զուգընթաց նկատվում է շահութաբերության /եկամտաբերության/ ցուցանիշների նվազում:

Առավելագույն շահույթի ձգտումը գրեթե ցանկացած կազմակերպության ֆինանսական կառավարման առումով պարտադրում է ընտրություն շահութաբերության և իրացվելիության նախընտրելիության միջև: Խնդրի էությունն այն է, որ իրացվելիության վերահսկելի դեֆիցիտը, և, հետևաբար, նրա արտացոլումը ընթացիկ իրացվելիության գործակցի նորմատիվից ցածր արժեքում, միշտ չէ նշանակում ֆինանսական դժվարություններ, այլ հակառակը, հնարավոր է ընկերության դինամիկ զարգացում՝ շրջանառության ակտիվ աճի և շուկայական մասնաբաժնի արագ մեծացման ռազմավարությամբ: Այսպիսով, առաջնային ընտրելով իրացվելիության կառավարման քաղաքականությունը, կազմակերպությունը ձեռք է բերում ֆինանսական կայունություն, սակայն դրամական հոսքերի սնուցող համակարգը սկսում է սառեցվել: Արագացնելով դրամական միջոցների շրջանառությունը, կազմակերպությունը բարձրացնում է շահութաբերության մակարդակի հավանականությունը, որը հանգեցնում է ներդրումային գրավչության, սակայն միաժամանակ նաև կուտակում է իրացվելիության ռիսկ, ինչը կարող է հանգեցնել պարտավորությունների կատարման անկարողության:

Տրամաբանական է եզրակացությունն առ այն, որ գրեթե ցանկացած կազմակերպության ֆինանսական քաղաքականության նպատակներից մեկը պետք է լինի իրացվելիության և շահութաբերության օպտիմալ հարաբերակցության

ձեռքբերումը, որն ուղղված է առավելագույն շահույթի ստացման նպատակներին հասնելուն՝ մրցունակ և ներդրումային առումով գրավիչ տնտեսվարող սուբյեկտի կարգավիճակի պահպանման պայմանով: Դա գործնականում նշանակում է, որ շահութաբերության և իրացվելիության կառավարման քաղաքականությունը դինամիկ բնույթ են կրում յուրաքանչյուր ժամանակահատվածում և պահանջում են կառավարման լուծումներ, որոնք ուղղված են օպտիմալ հավասարակշռության պահպանմանը:

12. ԱՀ սննդի արտադրության 27 կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների տվյալների ուսումնասիրության հիման վրա կառուցվել են էկոնոմետրիկ մոդելներ, որոնք նկարագրում են իրացվելիության, ֆինանսական պարբերաշրջանի և շահութաբերության փոխկապվածությունները: Կառուցված մոդելների հիմքում ընկած է ԱՀ սննդի արդյունաբերության կազմակերպությունների զուտ ընթացիկ ակտիվների շահութաբերության կախվածությունը ֆինանսական պարբերաշրջանից, իրացվելիությունից, ինչպես նաև իրացվելիության կախվածությունը ֆինանսական պարբերաշրջանից: Ստացված մոդելների կիրառումը ապագայում թույլ կտա, հաշվի առնելով կազմակերպությունների ոլորտային առանձնահատկությունը, մշակել միջոցառումներ սննդի արտադրության կազմակերպությունների շահութաբերության, իրացվելիության և ֆինանսական պարբերաշրջանի կառավարման կատարելագործման ուղղությամբ՝ ընթացիկ ակտիվների օպտիմալ միջակայք որոշելու հիման վրա:

Արենախոսության հիմնական դրույթները հրապարակվել են հեղինակի հետևյալ գիտական հոդվածներում.

1. Սարգսյան Գ. Գ. Իրացվելիության ֆինանսական կառավարման գործընթացում դեբիտորական եվ կրեդիտորական պարտքերի վերլուծությունը /ԱՀ արդյունաբերական կազմակերպությունների օրինակով/, «Ֆինանսներ և էկոնոմիկա» հանդես, Երևան: «Լիմուշ» N8 (216) 2018թ.:

2. Սարգսյան Գ. Գ. Իրացվելիության ֆինանսական կառավարման գնահատականը ԱՀ արդյունաբերության ոլորտի կազմակերպություններում, «Ֆինանսներ և էկոնոմիկա» հանդես, Երևան: «Լիմուշ» N9 (217) 2018թ.:

3. Սարգսյան Գ. Գ. Իրացվելիության վերլուծությունը որպես կազմակերպության ֆինանսական կառավարման գործիք, ԱրՊՀ գիտական տեղեկագիր (Հասարակական գիտություններ), Պրակ I, Ստեփանակերտ, 2019թ.

4. Սարգսյան Գ. Գ. Արցախի Հանրապետության արտադրական կազմակերպությունների ֆինանսական իրավիճակի ընդհանրական գնահատումը, Ֆինանսներ և հաշվապահական հաշվառում. գիտական հանդես, «ՀՈՒՄԿ» հիմնադրամ հրատարակչություն, Երևան: 2 (4) 2019թ.

5. Սարգսյան Գ. Գ. Ֆինանսական պարբերաշրջանի, շահութաբերության և իրացվելիության ցուցանիշների փոխկապվածության գնահատումը ԱՀ սննդի

արտադրության կազմակերպություններում, ԱրՊՀ գիտական տեղեկագիր (Հասարակական գիտություններ), Պրակ 2, Ստեփանակերտ, 2019թ.

6. Sargsyan G.G. Artsakh Republic Food Manufacturing Organizations Liquidity Assessment By The Turnover Indicators, Ֆինանսներ և հաշվապահական հաշվառում. գիտական հանդես, «ՀՈՒՄԿ» հիմնադրամ հրատարաչություն, Երևան: 2 (6) 2020թ.

ՏԱՐԿԻՏՅԱՆ ԳՕԱՐ ԳԱՎՐՄՇԵՎՆԱ
ПРОБЛЕМЫ ФИНАНСОВОГО УПРАВЛЕНИЯ ЛИКВИДНОСТЬЮ В ОРГАНИЗАЦИЯХ
РЕАЛЬНОГО СЕКТОРА ЭКОНОМИКИ (по материалам организаций по производству
продуктов питания Республики Арцах)

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.03-“Финансы, бухгалтерский учет”

Защита диссертации состоится 28-ого апреля 2022 г., в 14⁰⁰ на заседании специализированного совета 014 ВАК РА по экономике, действующего в Армянском государственном экономическом университете. Адрес: 0025, Ереван, ул. Налбандяна 128

РЕЗЮМЕ

Актуальность темы исследования. Проблемы улучшения финансового управления ликвидностью организаций всегда находились в центре внимания теоретиков и предпринимателей. Предпосылками стабильного развития бизнеса является обеспечение должного уровня ликвидности организации, требующей особого инструментария финансового управления. В организациях, осуществляющих бизнес в реальном секторе экономики, в настоящее время формируется необходимость установления противовесов между платежеспособностью, автономией, уровнем деловой активности и ликвидностью, чтобы не произошло нарушений финансового баланса и не пострадала экономическая деятельность из-за неплатежеспособности или наличия существенных финансовых рисков. Следует отметить, что обсуждения и выдвигения путей решения проблем внедрения и развития эффективных подходов к финансовому управлению ликвидностью организаций реального сектора экономики нашли место в трудах как иностранных теоретиков, так и армянских исследователей. Однако проблемы совершенствования финансового управления ликвидностью экономической деятельности в реальном секторе пока не получили своих глубинных решений в их исследованиях, что и предопределило тематическую направленность диссертации и цели проведенного исследования:

Цель и задачи исследования. Цель исследования – представить пути улучшения финансового управления ликвидностью организаций реального сектора экономики

Республики Арцах, которые будут способствовать повышению эффективности финансового управления в данной сфере. Для достижения данной цели были выделены следующие задачи, обусловившие логику и структуру исследования:

- провести анализ финансово-экономических показателей предприятий пищевой промышленности и выявить особенности формирования уровня ликвидности активов,
- исходя из финансово-экономических особенностей деятельности организаций реального сектора экономики, предложить методологические подходы к финансовому управлению ликвидностью,
- выявить степень управляемости уровня рентабельности и ликвидности на основе взаимосвязанных оценок финансовых результатов и ликвидности,
- разработать систему финансового управления взаимосвязи показателей ликвидности и финансового риска организаций,
- посредством факторных оценок представить механизм управления уровня воздействия финансового рычага и ликвидности активов,
- посредством регрессионного анализа выявить возможные тесные связи между показателями, характеризующими ликвидность и деловую активность,
- разработать механизм управления предотвращения финансовых рисков в организациях реального сектора экономики с т.з. обеспечения запаса ликвидности.

Научная новизна исследования. Научная новизна исследования – разработка путей улучшения финансового управления ликвидностью организаций пищевой промышленности Республики Арцах. В частности:

- в результате анализа финансово-экономических показателей предприятий пищевой промышленности были рассмотрены особенности формирования уровня ликвидности активов, на основе которых были предложены методологические подходы к финансовому управлению ликвидностью,
- на основе взаимосвязанных оценок финансовых результатов и ликвидности организаций реального сектора экономики выявлено, что при обеспечении тенденций роста рентабельности и инвестиционной привлекательности на основе ускорения оборота денежных средств, одновременно повышается риск ликвидности, что создает существенные риски неспособности погашать краткосрочные обязательства и формирования неплатежеспособности,
- разработана система финансового управления взаимосвязью показателей ликвидности и финансового риска организаций реального сектора экономики, создавая возможность уравновесить уровни влияния финансового рычага и ликвидности активов посредством факторных оценок и управлять обеспечением финансовых ресурсов,
- путем проведения регрессионного анализа выявлены тесные взаимосвязи между показателями ликвидности и деловой активности, что дает возможность применять эффективные инструменты управления по предотвращению финансовых рисков, и проводить обоснованные оценки обеспеченности запаса ликвидности.

PROBLEMS OF FINANCIAL LIQUIDITY MANAGEMENT IN ORGANIZATIONS OF THE REAL SECTOR OF THE ECONOMY (based on the materials of food production organizations of the Republic of Artsakh)

Abstract of the thesis for receiving the degree of PhD in Economics in the specialty 08.00.03 - "Finance, Accounting".

The defense of the thesis will take place on April 28, 2022, at 14:00 at the session of 014 Specialized Council on Economics of Supreme Certifying Committee of the Republic of Armenia operating at the Armenian State University of Economics.
Address: 128 Nalbandyan str., Yerevan, 0025.

ABSTRACT

The relevance of the research. The problems of improving the financial management by the liquidity of organizations have always been the focus of theorists and entrepreneurs. A prerequisite for stable business development is to ensure the proper level of liquidity of the organization, which requires special financial management tools. In organizations doing business in the real sector of the economy, there is currently a need to establish balances between solvency, autonomy, the level of business activity and liquidity in order to avoid the violations of financial balance and suffering of economic activity because of insolvency or the presence of essential financial risks. It should be noted that discussions and putting forward solutions to problems of introducing and developing effective approaches to the financial management of liquidity of organizations in the real sector of the economy have found a place in the works of both foreign theorists and Armenian researchers. However, the problems of improving financial management of the liquidity of economic activity in the real sector have not yet received their deep solutions in their research, which predetermines the thematic focus of the thesis and the objectives of the study.

The purpose and objectives of the research. The purpose of the research is to present the ways of improvement the financial management by liquidity of organizations in the real sector of the economy of the Republic of Artsakh, which will contribute to increasing the efficiency of financial management in this area. To achieve this goal, the following tasks have been identified, which determines the logic and structure of the study:

- to analyze the financial and economic indicators of food industry enterprises and identify the peculiarities of the formation of the level of asset liquidity,
- to propose methodological approaches to financial management of liquidity, based on the financial and economic characteristics of the activities of organizations in the real sector of the economy,

- to reveal the degree of controllability of the level of profitability and liquidity on the basis of interrelated assessments of financial results and liquidity,
- to develop a financial management system for the relationship between the indicators of liquidity and financial risk of organizations,
- to present a mechanism of managing the level of impact of financial leverage and liquidity of assets by means of factor assessments,
- to identify possible close relationships between indicators characterizing liquidity and business activity using regression analysis,
- to work out a management mechanism for the prevention of financial risks in organizations of the real sector of the economy in terms of ensuring a stock of liquidity.

The scientific novelty of the research. The scientific novelty of the research is the development of ways of improvement the financial management of liquidity of food industry organizations in the Republic of Artsakh. In particular:

- as a result of the analysis of financial and economic indicators of food industry enterprises, the features of the formation of the level of asset liquidity have been considered, on the basis of which methodological approaches to financial liquidity management are proposed,
- on the basis of interrelated assessments of financial results and liquidity of organizations in the real sector of the economy it has been revealed that while ensuring the growth trends of profitability and investment attractiveness based on accelerating cash turnover, the liquidity risk increases, which creates significant risks of inability to repay short-term liabilities and the formation of insolvency,
- a system of financial management of the relationship between liquidity indicators and financial risk of organizations in the real sector of the economy has been developed, creating an opportunity to balance the levels of influence of financial leverage and liquidity of assets through factor assessments and to manage the provision of financial resources,
- by conducting regression analysis, close relationships have been revealed between liquidity and business activity indicators, which makes it possible to apply effective management tools to prevent financial risks and to make reasonable assessments of the providing with the liquidity stock.